«Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության «Ֆոնդնեթ հարթակի միջոցով ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների գրանցման և սպասարկման կանոնները» նոր խմբագրությամբ գրանցելու մասին

2022-07-22

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/374 Ա

22.07.2022

«Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության «Ֆոնդնեթ հարթակի միջոցով ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների գրանցման և սպասարկման կանոնները» նոր խմբագրությամբ գրանցելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է1» կետը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 116-րդ հոդվածի 4-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 5/01-ի 66-րդ կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2022 թվականի հուլիսի 22-ի արձանագրություն թիվ 30) և «Հայաստանի ֆոնդային բորսա»

բաց բաժնետիրական ընկերության՝ 22.06.2022թ. ներկայացված միջնորդագիրը և կից փաստաթղթերը՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. Գրանցել «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության դիտորդ խորհրդի կողմից 20.06.2022թ. նոր խմբագրությամբ հաստատված «Ֆոնդնեթ հարթակի միջոցով ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների գրանցման և սպասարկման կանոնները»։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրության պահից։

Մարտին Գալստյան